

ԲԱՌԸ ՁԳՏՈՒՄ Է ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ

Բանալի բառեր և արտահայտություններ. ջրահարս, կապույտ, արշալույս, պատկեր, կարմիր թևեր, ճերմակ առագաստներ, հեքիաթ, ջերմություն:

Ключевые слова и выражения: русалка, синий, красные крылья, белые паруса, заря, сказка, теплота, изображение.

Key words and expressions: mermaid, blue, red wings, white sails, sunrise, tale, fever, image.

1960-ական թթ., երբ Պ. Սևակի, Հ. Սահյանի, Վ. Դավթյանի, Գ. Էմինի և նրանց սերնդի մի շարք այլ ներկայացուցիչների ջանքերով պոեզիայի զարգացումը մտավ առաջընթացի նոր հուն, գրական ասպարեզ իջավ երիտասարդ բանաստեղծների մի նոր սերունդ՝ աշխարհընկալման նոր մեթոդներով ու եղանակներով, պոեզիայի դերի և նշանակության վերաբերյալ յուրահատուկ պատկերացումներով:

Գրական-գեղարվեստական զարգացումները ծավալվում էին տարբեր ուղղություններով: Սերնդի մի շարք ներկայացուցիչներ ընդգծված «արևմտամետ» էին և փորձում էին բանաստեղծական մտածողությունը «թարմացնել» արևմտյան փիլիսոփայական տարբեր ուղղությունների տեսական հիմնադրություններով. «Կարելի է ասել, որ XX դարի գեղարվեստական միտքը մի փորձ է՝ հեռանալ մարդուց, որպես ինքն սպառած էությունից, թողնել նրա ձևերն ու հնարավորությունները և հայացքն ուղղել դեպի մի տարածություն, ուր մարդը, որպես շոշափելի այսաշխարհային էակ, կոնկրետ գոյություն, այլևս չի հետաքրքրում իրեն և ձգտում է հասնել մի սահմանի, ուր ինքն արվեստն է և գեղագիտական ձևերի մաքուր գոյությունը»¹: Իսկ դրա համար պետք է «փոխել հագուստները», որովհետև «Գրականությունը (արվեստն ընդհանրապես) ժամանակի ընթացքում փոխում է իր հագուստները, չի կարելի հին հագուստների հսկիչներ լինել, որքան էլ այդ հագուստները թանկ են մեզ

¹ Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն /հոդվածներ, էսսեներ/, Եր., 2009, էջ 15-16:

համար և սիրելի, միևնույն է, մենք գերադասում ենք մեր մարմինները ծածկել նոր հագուստներով»²:

«Արևմտամետներից» շատերը պարզապես չկարողացան դուրս գալ ազդեցությունների ոլորտներից և «իրենց մարմինները ծածկել նոր հագուստներով», ավելին, չկարողացան լավագույնս օգտվել իրենց ընձեռված ազատությունից: Գրականություն եկած նոր սերունդը «վաղուց պետք է հաղթած լինեք, բայց իրենց ազատությունից օգտվել չկարողացան: Նրանք ազատությունը դարձրին քմահաճություն՝ ով ոնց ուզի, թող գրի, ում խելքին ինչ փչի, թող անի: Նրանք հեռացան իրենց հայրենական ավանդներից: Նրանք ավելի կիրթ, ավելի գրագետ չեն, քան Վարուժանն ու Չարենցը, բայց սկսեցին այնպիսի բաներ անել, որոնց շրջանցումն անգամ Վարուժանին սրբապղծություն էր թվում: Սրանք ավելի պակաս տաղանդ չունեն, քան իրենց նախորդները, բայց, չգիտես ինչու, հողից կտրվեցին, հեռացան: Նրանք ահա թե ինչ արեցին, փախան իրենց կենսագրությունից, չկարողացան անհատականացնել: Ավելին, իրենց ժողովրդի կենսագրությունից փախան, իրենց լեզվի զրնգուն համ ու հոտից խուսափեցին: Նրանք իրենց մանկությունից չեկան»³:

Նոր սերնդի ներկայացուցիչների մյուս մասը հավատարիմ մնաց պոեզիայի ազգային ակունքներին՝ իր հետ բերելով նոր գույներ ու երանգներ, պատկերաստեղծման թարմ ձևեր ու եղանակներ:

Այդ սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից է Արմեն Մարտիրոսյանը, ով գրականություն եկավ անադմուկ, բայց հաստատուն քայլերով՝ ժողովածուից ժողովածու պարզեցնելով և բյուրեղացնելով իր երգի ակունքները, որոնք սկիզբ են առնում Նարեկացուց ու միջնադարյան տաղերգուներից, շարունակում մինչև Վարուժան, Տերյան ու Չարենց, Սևակ ու Սահյան: Ինքնահաստատման ճանապարհին կարևոր դեր ունեցան նաև Ուիթմենը, Լորկան, Ապոլինները:

Կողմնորոշման չափանիշներն, այնուամենայնիվ, Նարեկացին ու միջնադարյան տաղերգուներն էին, առանձնապես՝ Նարեկացին, ում ստեղծագործություններում «Բառերն այլևս բառեր չեն, խտացված գույներ են ու նրբափյուս մեղեդի, և այնքան տեղին են օգտագործված, որ գեղուհու յուրաքանչյուր քայլին համընթաց շարժվում են, և թվում է՝ մեր աչքի առաջ Ռաֆայելի նկարած Աստվածածինն է՝ միայն թե նրանից մի քանի դար առաջ հրաշակերտված»⁴:

² Էդոյան Հ., Գրողը և ժամանակը, «Գարուն», 1997, N11-12, էջ 45:

³ Սահյան Հ., Հարցազրույց, «Գարուն», 1984, N 9, էջ 44-45:

⁴ Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանող անցյալ, Եր., 2010, էջ 19:

Պոեզիայի վերաբերյալ Ա. Մարտիրոսյանն ունի իր կարծիքը. «Պոեզիան Աստծո ընտրյալն է, հետևաբար այնտեղ, ուր երկրային արքայությունն է, ոտք դնելը զուտ ոգեղենիկ է լինելու, մարմնական կշիռից ու ցանկությունից ազատված»⁵:

Արդեն առաջին՝ «Բանաստեղծություններ» ժողովածուում Ա. Մարտիրոսյանը փորձում է բացել բառի կեղևը, թափանցել նրա ենթաշերտերը, բառերը մաքրել, Պ. Սևակի արտահայտությամբ, «Ժանգ ու բորբոսից»: Երկնային ոլորտներում են արթնանում բառերը և՝

Արթնանալով դողում են.

Մարդկանց տառապանքի վայրկյանները».

-Երբ ես մեծանամ,-ասում է երեխան,-

Կհասկանամ բոլոր իմաստները բառի,

Եվ ինձ հետ կմեծանան խաղալիքներս:

Այս անգամ արդեն ուրիշ իմաստ կունենա աշխարհը, և բառերի իմաստները չհասկացող ու նրան շուրջբոլորը պատվող մարդկանց ճակատներին «տառապանքի գորգեր կգործեն բառերը»:

Բառերը գույն ունեն, համ ու հոտ, շնչավոր են ու կենդանի, քան որևէ այլ բան աշխարհում, ու երբ նրանք միանում են, ձուլվում մի ամբողջության մեջ, դառնում են երգ, առասպել, ասք ու լեգենդ:

Ներշնչումի աստվածային ակնթարթներում բանաստեղծն ու բառերն են դեմ դիմաց, բառերը՝ իրենց բաց կեղևներով, բանաստեղծը՝ աչքերը դեպի իր խորքը շրջած: Ներշնչումի այդ պահերին է բանաստեղծը զգում, որ

Ունեցած չունեցածը երգ էր,

Մի փոքրիկ երգ,

Որ նա երկար պահեց իր շրթունքների վրա

Ու քարշ տվեց իր հետ գիշերների միջով,

Ու լույսերի միջով քարշ տվեց երգը⁶:

Բառիմաստի ներիքն դինամիկան նոր հնչեղություն է հաղորդում ժամանակակից աշխարհի ռիթմերին, ավելի է խտացնում լույսի թափանցումները: Բառերը դուրս են գալիս իրենց պատյաններից ու երկնքից թափվում են «սպիտակ, որպես ձյուն, մաքուր, որպես «ծաղկաթեթիկ», հետո ծփում են «ինչպես ալիքները օվկիանոսի» և ալիքների վրայով դեպի իր մանկության սիրելի հեքիաթայաին հովիտներն է գնում բանաստեղծը՝ ինչպես ես Աստծո որդին՝ ձեռքի մեջ ձյուղը ձիթենու և

⁵ Նույն տեղում, էջ 84:

⁶ Մարտիրոսյան Ա., Բանաստեղծություններ, Եր., 1973, էջ 10:

շուրթերին բառը, որի մեջ մաքրության տերներն են ճոճվում»: Մանկության հեքիաթային հովիտներում՝

Ձայնը բացում է դարպասն անանուն,
և շուրթերի բաց դարպասի միջով
Բառերի հեծյալ բանակն է ելնում
Կովի գնալու սառը մարմաջով,
և բանակներ են մարտի մեջ մեռնում
և հեծյալներ են մեռնում անիծող⁷:

Եվ ինչպես զինվորներն են մարտադաշտում վիրավորվում կամ զոհվում, այնպես էլ՝ բառերը, և ինչպես զինվորների շիրիմներին են կարմիր կակաչներ դնում, այնպես էլ՝ բառերի, որոնք զոհվել են «թեկուզ հենց այնպես, թեկուզ անտեղի»:

Բայց մեռած բառերը նորից հարություն են առնում՝ որպես Հիսուս ու Փրկիչ: Նրանք սաղմոսներ են հյուսում մարդկանց շուրթերին, «մարդկանց շշուկներում ու բառերի վրա/Անձրևների տեսքով/ Մաշվում է ծննդի ու մահվան զգացողությունը...», բայց բառերը նաև անձրևի «երկար ճառագայթներով/Սպիտակ լույս են ասեղնագործում դաշտերի վրա», և արթնանում է օրը, անէանում է մահվան զգացողությունը, օրը լցվում է երկունքի ցավերով, և եթե նույնիսկ մահվան զգացողություն էլ կա, ապա՝ միայն «հասկերի մահ»՝ «կեռ մանգաղներից»:

Բառերն էլ, ինչպես մարդիկ, ծառերը, ծաղիկները, թռչունները անընդհատ շարժման մեջ են, ծնվում են, ապրում են իրենց գարուններն ու ամառները, աշուններն ու «ձերմակում են» նաև: Ժամանակի հարահոսում բառերը ձգտում են հավիտենության:

Ն. Սարգսյան

**Բառը ձգտում է հավիտենության
Ամփոփում**

Հոգվածում քննարկվում են Արմեն Մարտիրոսյանի պոեզիայի կառուցվածքային, լեզվաոճական յուրահատկությունները: Մասնավորապես նշվում է, որ հետեւելով դասական բանաստեղծության ավանդույթներին՝ Ա. Մարտիրոսյանը դրանք հարստացնում է նոր մոտեցումներով:

Н. Саргсян

**Слово тянется к вечности
Резюме**

⁷ Մարտիրոսյան Ա., Թռչուններ, Եր., 1978, էջ 15:

В статье обсуждаются структурные, языковые-стилистические особенности поэзии Армена Мартиросяна. В частности, отмечается, что, следуя традициям классического стихотворения, А.Мартиросян обогащает их новыми подходами.

N. Sargsyan

The word tends to eternity

Summary

The article discusses the structure of Martirosyan's poetry, linguostylistic details.

In particular, it is noted that following the tradition of the classic poem, A. Martirosyan enriches them with new approaches.